Միջազգային Խորհրդարանական Կրթաթոշակ

Հետաքրքրվո՞ւմ եք Ձեր հայրենիքի սոցիալական, ակադեմիական կամ քաղաքական կյանքով: Ցանկանո՞ւմ եք ակտիվորեն և մեծ պատասխանատվությամբ մասնակցել Ձեր երկրի ապագայի կերտմանը: Կկամենայի՞ք արդյոք հայացք նետել քաղաքականությանը «կուլիսների հետևից» և կամ հենց մաշկի վրա զգալ ժողովրդավարությունը:

Ուրեմն օգտվե՛ք հնարավորությունից և մասնակցե՛ք Գերմանական Բունդեսթագի և Բեռլինյան համալսարանների՝ աշխարհում բացառիկ ծրագրին և ձեռք բերե՛ք Միջազգային Խորհրդարանական Կրթաթոշակ (IPS):

Գերմանական Բունդեսթագը Բեռլինի համալսարանների համագործակցությամբ յուրաքանչյուր տարի 25 երկրների 115 որոկավորված երիտասարդների աշխարհում բացառիկ հնարավորություն է ընձեռում՝ բազմամսյա պրակտիկա անցնելու Բունդեսթագի անդամներից մեկի մոտ, որի ընթացքում նրանք կծանոթանան գերմանական քաղաքականության որոշումներ կայացնելու գործընթացին, կհավաքեն գործնական փորձառություն խորհրդարանական աշխատանքի բնագավառում:

Ծրագրի նպատակն է՝ երիտասարդների հետաքրքությունը բարձրացնել ժողովրդավարության ու հասարակության նկատմամբ, նրանց քաջալերել և ոգևորել՝ մասնակցելու ժողովրդավարական կյանքին: Միջազգային Խորհրդարանական Կրթաթոշակ ծրագիրը (IPS) երկարատև ներդրում է ժողովրդավարական արժեքների և հանդուրժողականության ամրապնդման, ինչպես նաև Եվրոպայում մշակութային բազմազանության և խաղաղ համակեցության խրախուսման մեջ:

Այսօր ծրագրի մասնակից երկրներից են համարվում Ալբանիան, Հայաստանը, Ադրբեջանը, Բոսնիա-Հերցոգովինան, Բուլղարիան, Էստոնիան, Ֆրանսիան Վրաստանը, Ղազախստանը, Խորվաթիան, Լատվիան, Լիտվան, Մակեդոնիան, Մոլդովան, Լեհաստանը, Բելառուսի հանրապետությունը, Ռումինիան, Ռուսաստանը, Սերբիան (և Մոնտենեգրոն) Սլովակիան, Սլովենիան, Չեխիան, Ուկրաինան, Հունգարիան և ԱՄՆ:

Միջազգային Խորհրդարանական Կրթաթոշակ ծրագիրը սկսվում է մարտի մեկից և ընդհանուր առմամբ տեևելու է հինգ ամիս: Կրթաթոշակի էական նպատակն է՝ անցնել երեքուկես ամսյա պրակտիկա Գերմանական Բունդեսթագի պատգամավորներից մեկի գրասենյակում: Բացի այդ կրթաթոշակառուները մասնակցելու են հինգ քաղաքական հիմնադրամների սեմինարներին և ավարտելու են լրացուցիչ ակադեմիական ծրագիր՝ կազմակերպված Բեռլինի երեք համալսարանների կողմից:

Մասնակիցները Գերմանական Բունդեսթագի բյուջեից ստանալու են ամսական 450,-- € կրթաթոշակ: Կրթաթոշակը ներառում է նաև երեք սենյականոց բնակարան երկու կրթաթոշակառուների համար, ինչպես նաև ուսանողական բժշկական, դժբախտ պատահարների և վնասների փոխհատուցման ապահովագրություն: Կստանձնվի նաև Բեռլին ժամանելու և մեկնելու ճանապարհածախսը:

Դիմորդները հիշյալ (IPS) ծրագրի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ, ինչպես նաև ցուցումներ կարող են գտնել www.bundestag.de/ips կայքէջում:

Ի սրտե հրավիրում ենք մասնակցելու Միջազգային Խորհրդարանական Կրթաթոշակ ծրագրին և ուրախությամբ կսպասենք Ձեր դիմումներին: